ՀՀ ՆԱԽԱԳԱՀ ՍԵՐԺ ՍԱՐԳՍՅԱՆԻ ԽՈՍՔԸ՝ ԱՐՏԱՍԱՆՎԱԾ Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԾՆՆԴՅԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ԵՒ ԳԱՀԱԿԱԼՈՒԹՅԱՆ 12-ՏԱՐԵԴԱՐՁԻ ԱՌԻԹՈՎ ԱԼ. ՍՊԵՆԴԱՐՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՕՊԵՐԱՅԻ ԵՒ ԲԱԼԵՏԻ ԹԱՏՐՈՆՈՒՄ

(4 նոյեմբերի, 2011 թ.)

Վեհափա՛ռ Տեր,

Սրբազա՛ն հայրեր,

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պարո՛ն Նախագահ,

Տիկնա՛յք եւ պարոնա՛յք,

Այստեղ գտնվելը եւ այս միջոցառմանը մասնակցելը մեծ պատիվ է. պատիվ, որը ես կիսում եմ Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցու միլիոնավոր զավակների հետ: Այդ հոգեւոր ընդհանրության կենտրոնը գտնվում է Հայաստանում՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, որից ճառագող լույսին են ուղղված աշխարհասփյուռ մեր քույրերի ու եղբայրների հայացքները:

Այսօր ես այստեղ եմ գտնվում՝ որպես միլիոնավորներից մեկը, ով եկել է վերահաստատելու իր որդիական սերն ու ակնածանքը Վեհափառ Հայրապետին՝ Նորին Սուրբ Օծություն Տեր Տեր Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսին՝ նրա վաթսունամյակի հանդիսավոր տոնակատարության առթիվ:

Վեհափա՛ռ Տեր,

Գերաշնո՛րհ հոգեւոր հայրեր,

Դուք եւ Ձեր սերնդի հոգեւորականները հատուկ առաքելություն եւ երջանկություն ունեք: Դուք մեր եկեղեցու հոգեւոր սպասավորի ծառայության ուղին ընտրեցիք այն տարիներին, երբ դա ամենեւին խրախուսված չէր: Ավելին, այդ ժամանակ հավատքը հանիրավի նսեմացվում էր, իսկ հավատավորները հետապնդվում էին իրենց դավանանքը պահպանելու համար:

Հոգեւոր ծառայության այդ ուղին սկսվեց երջանկահիշատակ Վազգեն Առաջին Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ, ով մեր ժողովրդի՝ իր հոգեւոր արմատներին հավատարմության իսկական խորհրդանիշ էր: Նրա առաջնորդության տասնամյակների այդ մեղմ, սակայն հաստատակամ դիմադրությունը ճանապարհ էր հարթում մեր ազատության եւ անկախության համար:

Վազգեն Առաջինն ու նրա սաները, որոնց շարքում էր նաեւ մեր հովվապետը,

թույլ չտվեցին, որ կտրվի ժամանակների կապը: Նրանք կանխում էին կեղծ կուռքերով իրական արժեքները փոխարինելու փորձերը: Նրանք գալիս էին սպանձնելու Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցու վերածննդի հովիվների առաքելությունը:

Սիրելի՛ հայրենակիցներ,

Այսօր մեր երկրում եւ նրա սահմաններից դուրս ծավալվել է լրջագույն եկեղեցաշինական շարժում, որն առաջնորդում է Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Մեր բնակավայրերում վեր են խոյանում նոր հոյակերտ տաճարներ, նոր շունչ են ստանում խոնարհվածները՝ մարմնավորելով մեր սերն ու նվիրումը մեր Տեր Հիսուս Քրիստոսին: Մարդու հոգեւոր ու բարոյական կատարելագործումը եւ դարձը դեպի մայր եկեղեցի Վեհափառ Հայրապետի անխոնջ գործունեության հիմնական նպատակն է:

Այս առումով ամենեւին էլ պատահական չէ նրա համակ ուշադրությունը երիտասարդ սերնդի հետ տարվող աշխատանքներին, ինչն այսօր իսկապես ընդգրկուն եւ բազմաշերտ է՝ հայորդաց տներից մինչեւ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցու երիտասարդական միություն: Վեհափառ Տերը, որպես իսկական քրիստոնյա, զուսպ եւ համեստ է իր խոսքերում: Մեր շուրջը տիրող ինքնագովասանքի աշխարհում նա խուսափում է իր գործունեությունն ի ցույց դնելուց եւ չի խրախուսում դա: Սակայն նրա հովվապետության արդյունքները երբեք չի կարելի համեստ գնահատել: Նրա խոնարհ ծառայության եւ վստահ ու հաստատուն առաջնորդության արդյունքն ակնհայտ է: Աչք ունեցողը՝ կտեսնի, ականջ ունեցողը՝ կլսի: Իսկ մեր բոլորի պարտականությունն է՝ լինել նրա կողքին եւ աջակցել մեր Սուրբ եկեղեցուն:

Ակնհայտ է, որ նրա տքնաջան աշխատանքն ու նվիրյալ ջանքերն ապարդյուն չեն անցնում: Այսօր Հայաստանը հոգեւոր վերելք է ապրում: Մարդիկ կրկին վերադարձել են իրենց ակունքներին, իրենց հայրերի հավատքին ու արժեքներին, որպեսզի հասկանան, թե ո՞վ են իրենք, որտեղի՞ց են եկել եւ ո՞ւր են գնում:

Այս հարցերը երբեք ժամանակավրեպ չեն:

Այս հարցերի պատասխանները մեր նախնիներին են բերել Թադեւոս եւ Բարդուղիմեոս առաքյալները՝ Հայաստան աշխարհին մատուցելով Աստվածաշնչի քարոզը եւ ճշմարիտ խոսքը:

Այս հարցերի պատասխաններն է տվել Սուրբ Գրիգոր Լուսավորիչը, ում կանթեղն այսօր էլ փարոս է բոլորիս համար:

Այս հարցերի պատասխանները յուրաքանչյուր հայի համար հասու են դարձել Սուրբ Մեսրոպի եւ Սուրբ Սահակի օգնությամբ, ջանքերով, տքնանքով ովքեր նոր հիմք դրեցին հայոց դպրության համար:

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանի ելույթը

Ելույթ է ունենում ԼՂՀ Նախագահ Բակո Սահակյանը

Այս հարցերի պատասխաններն այսօր էլ տալիս են Սուրբ Վարդան Մամիկոնյանն ու վարդանանց քաջերը, որոնց ժառանգած գենը հանգիստ չի տալիս մեր հանդեպ ատելություն ու թշնամանք սերմանողներին:

Քրիստոնեական հավատքը, սերը եւ բարոյականությունը, մեր դավանանքը աչքի լույսի պես պահելու ու պաշտպանելու պատասխանատվությունը օրհնություն է բոլորիս համար: Դա յուրաքանչյուրի՛ս պատասխանատվությունն է միմյանց եւ ամբողջ մարդկության հանդեպ:

Վեհափա՛ռ Տեր,

Կրկին շնորհավորում եմ Ձեզ հոբելյանի առթիվ: Օրերս լրացավ նաեւ Ձեր հովվապետության տասներկուամյակը, ինչը նշանավորվում է մեր միջավայրում մեր իսկ արժեքների ամրապնդմամբ:

Խորապես համոզված եմ, որ բարոյականությունը, հավատքը եւ եկեղեցին փոխկապակցված են եւ փոխպայմանավորված: Մեր ժողովրդի միլիոնավոր զավակների հետ միասին առ Աստված եմ ուղղում իմ աղոթքը եւ խնդրում ուժ, կորով ու շնորհ՝ Ձեր վեհ առաքելությունն իրականացնելու գործում:

Թող Աստված պահի ու պահպանի Հայաստանյայց Առաքելական Սուրբ եկեղեցին, Հայաստան աշխարհը եւ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինն իր նվիրյալ գահակալով: